ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

25.02.2022թ. ԿՆՔՎԱԾ N ՀԿԿ-ԳՀԱՇՁԲ–ՑՀ-2022/05
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «19» 08 2022թ.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Յու.Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ և «ԻՆՖՈՏԵԽ» ՍՊԸ-ների կոսուրցիումը, ի դեմս «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ ընկերության տնօրեն Մ. Շախնազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 25.02.2022թ-ին. կնքված **N ՀԿԿ-ԳՀԱՇՁԲ–ՑՀ-2022/05** պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Համաձայնագրի առարկան է հանդիսանում ցածր լարման սարքերի տեղադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք) համաձայն **N ՀԿԿ-ԳՀԱՇՁԲ–ՑՀ-2022/05** ծածկագրով 25.02.2022թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Սույն համաձայնագրով կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **N ՀԿԿ-ԳՀԱՇՁԲ–ՑՀ-2022/05** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված՝ 27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, գինը ավելացնել 710 000 (յոթ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով, որը չի գերազանցում սկզբնական կնքված պայմանագրի գնի տասը տոկոսը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների:

1.3 Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի Հավելված N 1-ի:

1.4 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

1.5 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե | «ԻՄՊՔԵՍ» ՍՊԸ |
| ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա | ք. Երևան, Կոմիտաս 16, 53բն |
| Ֆ/Ն գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00243582 | Հ/Հ 1570063797860100 |
| Հ/Հ 900011038701 | ՀՎՀՀ 00165322 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն՝ Մ. Շախնազարյան |
| Գ. Յու.Մկրտչյան | |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

**Հավելված N 1**
*25.02.2022թ.կնքված*
*N ՀԿԿ-ԳՀԱՇՁԲ-ՑՀ-2022/05 ծածկագրով գնման պայմանագրի*
*12.08.2022թ. կնքված N2 համաձայնագրի*

## Վճարման ժամանակացույց

Աշխատանքների կատարման — ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45311135/2 | Ցածր լարման սարքերի տեղադրման աշխատանքներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 710 000 | 710 000 | 710 000 | 710 000 |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե | «ԻՄՊՔԵՍ» ՍՊԸ |
| ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա | ք. Երևան, Կոմիտաս 16, 53րև |
| Ֆ/Ն գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00243582 | Հ/Հ 1570063797860100 |
| Հ/Հ 900011038701 | ՀՎՀՀ 00165322 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն՝ Մ. Շախնազարյան |
| Գ. Յու.Մկրտչյան | |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |